ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 119

ք. Երևան 31.05.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 03524692, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Աբովյան Հատիսի 1/96) միջև 23.07.2021թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-21-10/10-2 գնման պայմանագրի և պայմանագրին կից 03.03.2023թ. կնքված N 3 համաձայնագրի (Այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը պարտավոր էր մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 15-ը կատարել 80,000,000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքներ, սակայն «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից կատարվել է ընդամենը 8,852,318 (ութ միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր տասնութ) ՀՀ դրամի չափով աշխատանքներ, այսինքն 71,147,682 (յոթանասունմեկ միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր ութսուներկու) ՀՀ դրամի չափով աշխատանքները չեն կատարվել:

Հաշվի առնելով, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ